Հաստատում եմ՝

Տնօրեն /Գ. Բաղալյան/

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխանի

Մ. Խոստեղյանի անվան

N2 միջն. դպրոցի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Ծ. Խչոյան

2021-2022 ուս. տարի

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021-2022 ուս. տարում դպրոցում պլանավորված և կատարված աշխատանքների հիմքում դրված է եղել հայրենասեր, ազգային մտածողություն ունեցող, ազնիվ, օրինապահ, մարդասեր, հասարակական գործում դիրքորոշում ունեցող քաղաքացու ձևավորումը:

Ուսումնական տարվա սկզբին իմ կողմից ստուգվել և տնօրենի հաստատմանն է ներկայացվել դասավար դասղեկների աշխատանքային պլանները:

Ուսումնասիրվել է դասղեկների աշխատանքները և արդյունքները քննարկվել տնօրենության հետ՝ համատեղ նիստերում:

Սեմինար խորհրդատվություններ են կազմակերպվել դասղեկների հետ՝ ժամանակակից դաստիարակության խնդիրների և մեթոդների արդյունավետության բարձրացման ու համադպրոցական և դասարանային միջոցառումների կազմակերպման վերաբերյալ:

Սեմինար խորհրդակցությունների ժամանակ փորձի փոխանակման և դաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով կազմակերպվել է փորձառու մանկավարժների հոդվածների ունկնդրում ու քննարկում հետևյալ թեմաներով.

- Մանկավարժների և ծնողների համագործակցության կազմակերպման պայմաններն ու տեխնոլոգիան
- Սթրեսները դպրոցական միջավայրում և դրանց հաղթահարման ուղիները
- Մասնագիտական կողմնորոշումը հանրակրթական դպրոցի տարբեր աստիճաններում
- Էքսկուրսիաները որպես ինտերակտիվ ուսուցման մեթոդ

Ուսուցիչների մասնագիտական կատարելագործման, առաջավոր փորձի փոխանակման նպատակով բոլոր մեթոդմիավորումներում կազմակերպվել են սեմինար քննարկումներ հետևյալ թեմաներով.

- Աշակերտի խոսքի զարգացումը հանրակրթության կարևոր խնդիրներից է (հումանիտար առարկաների մասնախումբ)
- Նախագծային մեթոդը որպես ուսուցման ժամանակակից տեխնոլոգիա
- Արժեքային համակարգի ձևավորման խնդիրը «Ֆիզիկա» առարկայի դասավանդման ընթացքում (ֆիզիկա-մաթեմատիկայի մասնախումբ)
- Մանկավարժական հաղորդակցումը՝ ուսուցչի մասնագիտական գործունեության կարևոր բաղադրիչ (տարրական դասարանների մասնախումբ)
- Ինտերակտիվ կրթական միջավայրի ձևավորումը՝ դասի արդյունավետության կարևոր պայման (բոլոր մասնախմբերում):

Կատարվել են բազմաթիվ դասալսումներ դասի դաստիարակչական կողմը գնահատելու, ուսուցիչներին մասնագիտական և մեթոդական աջակցություն ցույց տալու նպատակով:

Կատարվել են դասղեկական ժամերի մշտադիտարկումներ:

Ստուգվել և հաստատվել են դպրոցում գործող խմբակների թեմատիկ պլանները, մատյանների վարումը, աշակերտների հաճախումները:

Ամբողջ ուս. տարվա ընթացքում սերտ համագործակցություն է ծավալվել ԴԱԿ-ի, ԾԽ-ի և ԱԽ-ի հետ:

Համատեղ պլանավորվել, կազմակերպվել և վերահսկվել են դպրոցում կազմակերպվող բոլոր տեսակի դաստիարակչական աշխատանքները, բացահայտվել են առկա բացթողումները և ձեռնարկվել անհրաժեշտ միջոցառումներ:

Վերահսկողություն է սահմանվել աշակերտների պարբերաբար ուշացումների, անհարգելի բացակայությունների նկատմամբ:

Դպրոցում անցանկալի վարք ցուցաբերող, կարգապահական տույժի ներկայացված աշակերտներ չկան և սովորողների հետ կապված խնդրահարույց հարցեր չեն արձանագրվել:

Մշտապես ուշադրության կենտրոնում են պահվել սոցիալապես անապահով աշակերտների խնդիրները:

Ծնողական խորհրդի նիստերում ծնողների իրավական գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով ծանոթացրել եմ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի դրույթներին, ՀՀ ընտանեկան օրենսգրքի և ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքում սովորողների և ծնողների իրավունքներին ու պարտականություններին, ինչպես նաև պատասխանատվություն կրելու մասին հոդվածներին:

Երեխաների դաստիարակության գործում ծնողներին մեթոդամանկավարժական խորհրդատվություններ կազմակերպելու նպատակով անցկացվել են զրույցներ «Ծնողների քաղաքացիական ու բարոյական պատասխանատվության մասին», «Խրախուսումն ու պատիժը որպես դաստիարակչական մեթոդ ընտանիքում» թեմաներով:

Գրադարանավարի հետ համատեղ կազմակերպվել են միջոցառումներ «Ընթերցանությունների խրախուսում» և «Ապրելու ապրիլ» համադպրոցական միջոցառումները:

Բուժքրոջ հետ միասին կատարվել են սովորողների առողջության պահպանմանն ուղղված պարբերական ստուգումներ, անցկացվել են զրույցներ «Առողջ ապրելակերպի», «Վնասակար սովորությունների մասին» թեմաներով:

Ողջ ուսումնական տարվա ընթացքում դպրոցը սերտ կապի մեջ է ոստիկանության անչափահասների գծով աշխատակիցների հետ, որոնք տարրական դասարաններում վարել են զրույցներ «Ճանապարհային երթևեկության մասին», իսկ բարձր դասարաններում «Թմրամիջոցների և դրանց ապօրինի շրջանառության»,

«Համակարգչային վտանգավոր խաղերի» և աշակերտներին հուզող այլ հարցերի վերաբերյալ:

Դպրոցը ուս. տարվա ընթացքում համագործակցել է «Վորլդ Վիժն» կազմակերպության հետ սոցիալապես անապահով աշակերտներին նյութական օգնության, տարբեր մշակութային միջոցառումներին մասնակցելու ուղղությամբ, ինչպես նաև կազմակերպվել են դասընթացներ «Մասնագիտական կողմնորոշում» և «Մեդիագրագիտություն» թեմաներով:

«Գյումրու երիտասարդական կազմակերպություն» ու «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ների հետ համագործակցելով դպրոցի աշակերտները մասնակցել են մի շարք ծրագրերի և հաղթող ճանաչվել:

2021-2022 ուս. տարվա ընթացքում կազմակերպված միջոցառումներից են.

1. Գիտելիքի օրվան նվիրված միջացառում,
   Դպրոցի մուտքի ձևավորում
2. 44-օրյա պատերազմում զոհվածների խաչքարի բացման արարողություն
3. Անկախության օրվան նվիրված միջացառում «Իմ երազ, իմ երկիր հայրենի»
4. «Հայաստանը մենք ենք» պաստառի պատրաստում
5. «Հայ ժողովրդի միասնությունը» նկարների ցուցահանդեսի կազմակերպում
6. Երեխաների իրավունքների պաշտպանության կոնվենցիայի հետ ծանոթացում
7. «Առաջին բուժօգնություն» միջոցառման անցկացում
8. «Ճանաչենք մեր հայրենիքը» միջացառում
9. Ուսուցչի օրվան նվիրված դասարանային միջոցառումներ
10. «Մեր երազանքների ապագան» նամականիշների պատկերազարդման մրցույթ
11. Էներգիայի խնայողության օրվան նվիրված իրազեկման դաս
12. Իրազեկման դաս «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր»
13. Իրազեկման դասեր «Բնական աղետներ, արտակարգ իրավիճակներ»
14. «Իմ հայրենիքի պատմության հերոսական էջերը» միջացառում
15. Զրույցների շարք «Կոնֆլիկտների առաջացման պատճառները: Դրանց լուծման հնարավոր ելքերը»
16. Ամանորյա դասարանային միջոցառումներ
17. Դասասենյակների ամանորյա ձևավորման մրցույթ
18. Հայոց բանակի 30-ամյակի նվիրված միջացառում
19. «Հայ զինվոր» խորագրով նկարների ցուցահանդես
20. Զրույց «Էթիկայի նորմերի մասին»
21. Ազգային ավանդույթներ և տոներ
    Տյառն ընդառաջ

    Սուրբ Սարգիս

    Զատիկ
22. Առողջ ապրելակերպի մասին զրույցների անցկացում
23. Աստվածաշնչից նյութերի ընթերցում

24. Մայրենի լեզվի միջազգային օր
25. «Խոսենք հայերեն, խորհենք հայերեն, ապրենք հայերեն» պաստառի պատրաստում
26. Ադրբեջանում կազմակերպված ջարդերի և զոհերի իրավունքների օր
27. Զրույց «Ազնվությունը մարդկային հարաբերությունների հիմքն է»
28. «Շնորհավոր տոնդ սիրելի մայրիկ» միջոցառումների անցկացում
29. Վիկտորինայի կազմակերպում «Սուրբ գրքի շտեմարան»
30. Ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումներ
31. Դասախոսություն նվիրված ջրի համաշխարհային օրվան
32. Զրույց եզդի ազգի պատմության և ազգային ավանդույթների մասին
33. Մեծ եղեռնի հիշատակմանը նվիրված միջոցառում
34. Հուշարձանների պահպանության օրվան նիրված միջոցառումներ
35. Սպորտային միջացառումների կազմակերպում
36. Տեսադաս «Աղբի և թափոնների վնասակար ազդեցությունը բնության և մարդու առողջության վրա»
37. Զրույց «Մարդն աշխատանքով է գեղեցիկ»
38. Զրույց «Արցախյան հերոսամարտը և նրա հերոսները»
39. Այցելություն Գավառի Հանրային գրադարան և Երկրագիտական թանգարան
40. Էքսկուրսիաների կազմակերպում «Մեկ օր բնության գրկում»
41. Ծառատունկի և շաբաթօրյակների կազմակերպում
42. Երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառում
43. Զրույց նվիրված շրջակա միջավայրի պաշտպանության օրվան
44. Դպրոցական գույքի և դասագրքերի վերանորոգման աշխատանքների կազմակերպում
45. Ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում Հայաստանի տարբեր բնակավայրեր